

ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԱՅՐ ՅՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՅ ՄԵԾԻ ՏԱՆԵ ՆԿԵԼԻԿԻՈՅ ԿԱՅՈՂԻԿԱՆ ՍՈՒԹԵԱՆ

Անուշաւան Վրդ. Դանիէլեանի կողմէն ներկայ Յուլիանի Գրադարանի յաւելում մըն է հայերէն ձեռագիրներու շարքին վրայ: Տպուած է 1984 թին, Մեծի Տանն կրիկիոյ կաթողիկոսութեան Տպարանը, Անթիլիաս: Կը բաղկանայ ժն + 650 երկսիւն էջերէ: Կը պատկանի Դանիէլեանի Կրթական Հիմնարկութեան Հայկական Մատենաշարին:

Մեծի Տանն կրիկիոյ Գարեգին Բ. ՎԷՆ. Կաթողիկոսի Յառաջադրանքին կը յաջորդեն կաթողիկոս Ներսիսեանի և Շնորհակալիքը Յուլիանի մէջ նկարագրուած են 223 ձեռագիրներ (էջ 1-546): Մնացեալ էջերը կը պարունակեն Ցանկեր և Տախտակներ:

Խորաքանչիւր ձեռագրէ նկար մը դրուած է (2-7 տող), որով ընթերցողը գաղափար մը կ'ունենայ գրառեցողներու մասին: Նոյնը կրտարկուած է պատասիկապահանգներու պարագային: Կան նաև

Թաւ, գնաց կեանքը, ու եղաւ քաղցր ու դա՛ն յիշատակ:

Վանքի ու Երուսաղէմի քաղցրագոյն օրերու յիշատակին մէջէն, սարսի խորհրէն կը մտղթմէ օրերի ու Գերաշնորհ Սրբազանին քաջառողջ և արևադարձային:

1980 թին տեսայ զինք իր միեւնոյն խուցէն ներս — գրողարան, մահճակալ, գրասեղան և ուրիշ ոչինչ — ու սիրտս դողաց հին օրերու յիշատակով: 23 տարի չէի տեսած Վանքը: Աստուած միայն գիտէ թէ անգամ մըն ալ երբ պիտի տեսնեմ Վանքն ու հին օրերու մնացորդացը...

«ՏԵ՛ր, Դո՛ւ ստեղծեր, մի՛ կարուստաներ, զգործս ձեռաց քոյ մի՛ անտեսուենք»:

ԻՍԱՀԱԿ Ծ. ՎՐԴ. ՂԱԶԱՐԵԱՆ
Բաղնիս ֆաւր, Մ. Ն.

Փոյլուն սպիտակ թուղթով հինգ թերթի յատկացուած գունաստոր նկարներու:

Կարծէ իւրանիս ուղարկութեան առնել պատրաստուած ցանկերը, թիւով 15, որոնք մեն գիշարութիւն կ'ընծայեն բանասէրներուն, իսկ գրուած ին Աննանուններու, Տեղանուններու և Նիւթերու Ցանկերը, ապա Գրադարանի Ժամանակագրական Ցանկը, Նախագաղափար և Հետագայ Յիշատակարաններու Ցանկը և Պատասիկապահանգներու Ցանկը: Ասոնց կը յաջորդեն Տեղանուններու Ցանկէն առանձնացուած՝ Գրադարանի Վարդերու Ցանկը, և Աննանուններու Ցանկէն առանձնացուած՝ Գրիչներու, Մարգարիտներու, Կաթողիկոսներու, Թուղթ կողմերու, Ստացողներու, և Կնքադրերու Ցանկերը: Վերջին տեղը կը բռնեն Կնքներու Ժամանակագրական Ցանկը և Մանրանկարչութեանց Ցանկը:

Համեմատական Տախտակները կը գրուեն համարիկ 636-639 էջերը: Ապա կու գայ Հնգշունուր Տախտակը Մեծի Տանն կրիկիոյ կաթողիկոսութեան ձեռագիրներուն, էջ 640-646: Յաջորդ էջին վրայ կը տեսնուի կաթողիկոս Գրադար Յիշատակարանը:

Վերի տողերը պարզօրէն ցոյց կու տան թէ կաթողիկոս Զանք չէ խնայած իր ձեռնարկած գործը լաւագոյնս ի գլուխ հանելու համար:

Թերեւս անօգուտ չհամարուի հետեւել նկատողութիւնը թիւ 10 ձեռագրի գրութեան ժամանակին վերաբերմամբ: Այդ ձեռագրին գրիչը, Տիրատուր արեղայ Ղրիմցի, իր եղբորը Մկրտչի հետ, երեսուցէ կը գտնուէր 1424-1433 թուականներուն, և կը զբաղէր գրչութեամբ: Ըստ այսմ ժողովուրդի տեղի ճիշդ պիտի ըլլայ նշանակել ժն. Դար:

Դուրսուտ կիւլլէկեան հոյակապ Հիմնարկութեան մեկնաստութեան և Մ. Տ. կրիկիոյ կաթողիկոսութեան ժողովան մէկ անդամին, Հոգ. Անուշաւան Վրդ. Դանիէլեանի աշխատասիրութեան շնորհիւ Հայ մշակութի գիտնականին մէջ կ'աւելնայ արժէքաւոր կոթող մը ևս, ի պարծանս զոյգ Հաստատութեանց և յօգուտ Հայ բանասիրութեան:

Ն. ԱՐԳ. ԾՈՎԱԿԱՆ